

Գյուլմրի քաղաքի
ջրամատակարարման և
ջրահեռացման ներկյա վիճակն
և ոլորտի հիմնախնդիրները

Գևորգ Պետրոսյան
“ԲԻՈՍՈՏԻԱ” ՀԿ-ի նախագահ
Գյուլմրու Օրհուս կենտրոնի համակարգող

ք. Գավառ
30-ը հունվարի 2014թ.

ՀՀ Շիրակի մարզում ջրամատակարարում
իրականացնող ընկերություններ

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ -

սպասարկում է 38 համայնք, այդ թվում
երկու քաղաքային և 36 գյուղական:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ –

սպասարկում է 38 համայնք, այդ թվում մեկ
քաղաքային և 37 գյուղական:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

- սպասարկում են 43 գյուղական համայնք:

Ջրամատակարարումը ՀՀ Շիրակի մարզում

ՀՀ Շիրակի մարզում ամենամեծ ծավալի ջրամատակարարում իրականացնող ընկերությունը «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն է, որը սպասարկում է մարզի 36 գյուղական համայնքների, Գյումրի ու Մարալիկ քաղաքների, մոտ 51429 բաժանորդների:

Այդ թվում 50005 բնակիչ-բաժանորդների, 267 կազմակերպությունների ու ձեռնարկությունների, 1157 տնտեսավարող սուբյեկտների:

Ջրամատակարարումը ՀՀ Շիրակի մարզում

ՀՀ Շիրակի մարզում ըստ իրականացված ջրամատակարարման ծավալների երկրորդ մեծ ընկերությունը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն է, որը սպասարկում է մարզի 37 գյուղական համայնքներ և Արթիկ քաղաքը: Ընկերության Հյուսիս-արևմտյան մասնաճյուղը ՀՀ Շիրակի մարզում աշխատում է Արթիկ տեղամասի և Աշոցք ենթատեղամասի միջոցով:

Մատակարարվող ջրի քանակը

Գյումրի քաղաքը ընդհանուր առմամբ ստանում է **1850լ/վրկ – 2000լ/վրկ ջուր**, որը բնակչության կողմից օգտագործում է ոչ միայն խմելու, այլ նաև կեցադային կարիքների և ոռոգման համար:

Գյումրի քաղաքը խմելու որակի ջուր է ստանում ջրամատակարարման չորս հիմնական աղբյուրներից.

1. Ղազանչիի երկու ջրատարներով՝ 820 լ/վրկ,
2. Զույգաղբյուրի համակարգով՝ 450 լ/վրկ,
3. Կրասարի արտեզյան հորերից՝ 150-200 լ/վրկ,
4. Վարդբաղի աղբյուրներից՝ 45 լ/վրկ:

Ըստ մարզի Հիգիենիկ հակահամաճարակային ծառայության տվյալների, վերը նշված աղբյուրների ջրերի որակը համապատասխանում է խմելու ջուր **2874-82** պետստանդարտի պահանջներին:

Մատակարարվող ջրի սակագները

Ըստ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման, 2010թ. ապրիլի 1-ից «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին մատակարարված յուրաքանչյուր մ3 խմելու ջրի սակագինը սահմանվել է 172,21 դրամ, այդ թվում ջրամատակարարման համար 146,30 դրամ, ջրահեռացման համար՝ 25,91 դրամ:

ՀՀ Շիրակի մարզի ջրային ռեսուրսների առանձնահատկությունները



ՀՀ Շիրակի մարզի ջրային ռեսուրսների առանձնահատկությունը նրանց անհամամասնական տեղաբաշխումն է:

Մարզի հյուսիսային մասում ջրերը շատ առատ են, իսկ հարավային մասում՝ չափազանց քիչ:

Սակավաջուր տարածաշրջաններ են համարվում Անիի և Արթիկի տարածաշրջանները:

Անիի շրջանում աղբյուրները գործնականում բացակայում են: Շատ փոքր հզորության աղբյուրներ են հանդիպում Աղին և Սարակապ գյուղերի շրջակայքում:



Շիրակի մարզի ջրային պաշարների մեջ
էական դեր են խաղում բազմաթիվ
աղբյուրները: 1 լ/վրկ և ավելի հզորությամբ
աղբյուրների թիվը հասնում է մոտ **600**-ի:
Աղբյուրների մեծ կուտակում կա Շիրակի
հյուսիսում (Աշոցքի և Ամասիայի
տարածաշրջաններում):

Վերին Ախուրյանի ավազանի պաշարները
հաշվված և հաստատված են ՊՊՀ-ի կողմից,
1986թ.: Ընդհանուր պաշարները կազմում են
287.7 հազ մ³/օր, (Ղազանչիի, Կրասարի,
Վարդաղբյուրի, Արփա լճի աղբյուրներ):

Երկրորդ խոշոր ավազանը՝ Զույգաղբյուրն է,
որի հաշված և հաստատված պաշարները
կազմում են **45.5** հազ.մ³/օր **1986թ.**:

Երրորդ ավազանը Չաիրի աղբյուրներն են
(Աշոցքի տարածաշրջան), գտնվում են
Թորոս գյուղից **3**կմ հեռու, պաշարները՝
1.3հազ.մ³/օր:

Հաշվարկված են նաև Շիրակի գոգա-վորության արտեզյան ջրերի պաշարները (Ախուրյանի, Անիի, Արթիկի տարածա-շրջաններ և Ախուրյան գետի ձախափնյա հատված):

Հաշված և հաստատված պաշարների ընդհանուր քանակը կազմում է **295.8 հազ.մ³/օր**:

Հաշվարկները ցույց են տալիս, որ Շիրակի մարզի ջրային ռեսուրսները կարող են ապահովել մոտ մեկ միլիոն բնակչության խմելու և ոռոգման ջրի պահանջ:

Բայց այսօր հաշվարկված պաշարների միայն **50-52%** է օգտագործվում ջրամատակարարման համար ամբողջ Շիրակի մարզում:

Ջրամատակարարման խնդիրները

Այսօր Շիրակի մարզում սահմանված կարգով վարակազերծված խմելու ջուրը են ստանում միայն Գյումրի, Մարալիկ քաղաքները և 35 գյուղական համայնքներ: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում:

Մարզի գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների 20%-ը չունի ջրի ծորակ տանը կամ տան բակում և օգտվում են ընդհանուր աղբյուրից:

Ջրամատակարարման ոլորտում առկա խնդիրները

ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման ոլորտում առկա խնդիրները հիմնականում կապված են ոչ թե ջրի պակասի հետ, այլ ջրամատակարարման համակարգերի հնամաշության, քայքայվածության, պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ միջոցների բացակայության, արտահոսքերի և կորուստների հետ:

Ջրամատակարարման համակարգի գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում:

Ջրահեռացման համակարգի վիճակը

Երկրաշարժը էական վնաս է պատճառել քաղաքի կոյուղու ներքին ցանցին:

Համաձայն պաշտոնական տվյալների, **ցանցի մոտ 52 կմ-ը կարիք ունի հիմնական վերակառուցման, իսկ 14 կմ-ը ընթացիկ նորոգման:**

Քաղաքի տարածքով հոսող գետակները՝ Գյումրին, Ղոր-Ղոբին և Չերքեզի ձորը վեր են ածվել բաց վիճակում հոսող կոյուղու կոլեկտորի: Մարզի ինֆեկցիոն հիվանդանոցի և հակատուբերկուլոզային դիսպանսերի կեղտաջրերը առանց նախնական վնասազերծման լցվում են կոյուղու ներքին ցանցը:

Ջրահեռացման համակարգի վիճակը

Բավական է նշել, որ այսօր Գյումրիի գետակի հոսքի հիմնական մասը (մոտ 70%) կազմում են կոյուղաջրերը, քանի որ գետակի ձախափնյա կոյուղաջրերի կոլեկտորը կառուցված չէ և գետակի ողջ երկարությամբ տեղադրված ձախափնյա թաղամասերը իրենց կոյուղաջրերը լցնում են ամիջապես գետակի մեջ:

Զրահեռացման համակարգի վիճակը

Քաղաքի տարածքում տարվա ընթացքում առաջանում և ջրահեռացման ցանցի միջոցով հեռացվում է մոտ 20մլն. մ3 կեղտաջուր:

Գյումրի քաղաքի գլխավոր կոլեկտորը ձգվում է Գյումրի գետակի աջ ափով: Չախ ափի կոլեկտորը նախագծվել է և մինչև հիմա չի կառուցվել:

Գյումրի գետակի աջափնյա կոլեկտորը հավաքում է քաղաքի կեղտաջրերի մոտ 25%-ը, իսկ կոյուղու ցանցի մնացած հատվածը միացած է մի մասը քարիզներին, մյուս մասը քաղաքի միջով հոսող գետերին:

Կեղտաջրերի մաքրման վիճակը

Գյոււմրու նոր մաքրման կայանը հիմնվել է մոտ **1984-1985** թթ.:

Առավելագույն հզորությունը կազմել է **78.000 մ³/օր**, բայց գործել է մինչև **46.000 մ³/օր** ծավալներով:

Երկրաշարժից հետո այն դադարել է գործել, թալանվել է և ավերվել: Ներկայումս չի գործում և չի էլ նախատեսվում վերականգնել, քանի որ մասնագետները տնտեսագիտական տեսակետից դա համարում են անիմաստ:

Գյումրու կոյուղաջրերի մաքրման կայանն այսօր



Կեղտաջրերի առաջացրած հետևանքները

Այսօր Գյումրի քաղաքում առաջացող բոլոր արդյունաբերական և կենցաղային հոսքաջրերը առանց մաքրվելու լցվում են Ախուրյան գետը:

Դեռ 1989թ. տվյալներով գետի աղտոտվածությունը բազմաթիվ անգամ գերազանցում է թույլատրելի սահմանային խտությունները՝ փոքրացնելով նրա ինքնամաքման հատկությունները:

Առանց մաքրման գետը թափվող կեղտաջրերի քանակի ($0.5\text{մ}^3/\text{վրկ}$) նոսրացման համար պահանջում է 8 անգամ ավելի մեծ ջրի ծախս ($4.0\text{մ}^3/\text{վրկ}$), որը չի կարող ապահովվել Ախուրյան գետի ջրերով, քանի որ նրա 75% ապահովվածությամբ միջին օրական նվազագույն ծախսը կազմում է $2.66\text{մ}^3/\text{վրկ}$:


Պետք է ի նկատի ունենալ, որ Ախուրյան գետը շատ կարճ տարածություն անցնելուց հետո լցվում է Ախուրյան անդրսահմանային ջրամբարը, որի ջրերն օգտագործվում են ոռոգման համար:

Գյոււմրու քարիզները

Գյոււմրու ստորերկրյա ջրերի մակարդակի կարգավորման խնդիրները լուծելու նպատակով կառուցվել են ստորգետնյա ջրատար համակարգեր, որոնց բաղկացուցիչներն են քարիզները:

Դրանց շինարարությունը Գյոււմրիում սկսվել է 1820-ական թվականներին և շարունակվել է մոտ մեկ դար:

Քարիզների մայրուղիների ընդհանուր երկարությունը քաղաքի տարածքում կազմում է մոտ 12կմ, իսկ քաղաքից դուրս մոտ 8կմ:



*Քարիզ Գյումրու Ջիվանի փ.
5 մետր խորության վրա,
2003թ.*

Քարիզների լայնակի կտրվածքը կամարաձև է, քարաշեն քարիզների դեպքում՝ տանիքաձև, կամարաձև կամ տաշտաձև:

Քարիզների բարձրությունն ու հիմքի լայնությունը տատանվում են 1,2-1,7մ և 0,8-1,2մ: Քաղաքի կենտրոնական և հարավային մասերում քարիզների պատերը և ծածկը քարաշեն են՝ կառուցված տեղական տուֆով և կրաշաղախով:



Գյուլմրի գետակի գետնուղու ներկա վիճակը







Ստորգետնյա վթարային սելեվատար Շահունյան փողոցում (լուսանկարը Ռ.Գասպարյանի)

Ստորգետնյա սելավատարի վրա կառուցված փլուզված տուն Աբովյան փողոցում (լուսանկարը Ռ.Գասպարյանի)



Կոնտակտային տվյալներ

Հասցե.

ՀՀ, 3103, ք.Գյումրի, Գ.Նժդեհի 12ա

Հեռ./Ֆաքս.

(+ 374 312) 3 29 13, (+ 374 93) 714 533

Էլ.փոստ.

gevpetrosyan@gmail.com, biosophia@gmail.com,
gyumricenter@gmail.com



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ